ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56>>

ք.Երևան

«29» մարտի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵԾ ՀԻՄՔ» Ա/Կ-ն, ի դեմս կոպերատիվի նախագահ Ա. Զաքարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.96 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ օգոստոսի 15-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից **հաշված 30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **33996000.0 (երեսուներեք միլիոն ինն հարյուր իննսունվեց հազար)** ՀՀ դրամ, որից **5666000.0 (հինգ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,

գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..16 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը**:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Կարապետյան 9
Կենտրոնական գանձապետարան	«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410743	Հ/Հ 223070102361
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01201774
Գ. Չթրյան----------	Ա. Զաքարյան ----------
Ստորագրություն՝	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 29>> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56>> գնման պայմանագրի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.96 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5		
		Շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	E46-124	Փայտյա դռների ապամոնտաժում	$մ^2$	3.42000	0.71300	2.43846
2	E46-119 E46-120	Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=30մմ	$մ^2$	11.90000	0.25200	2.99880
3	E46-99	Բետոնե հարթակի քանդում /մուտքի հատված/	$մ^3$	0.45000	9.49700	4.27365
4	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով	$մ^3$	0.30000	1.32600	0.39780
5	P23-169	Բետոնե խճանկարե հատակի քերատում	$մ^2$	296.80000	0.12100	35.91280
6	E46-109	Կերամիկական սալիկներից հատակի քանդում	$մ^2$	49.10000	0.26100	12.81510
7	23-164	Փայտե մանրահատակի քանդում	$մ^2$	214.00000	0.33200	71.04800
8	P5-1	Լամինատե հատակի քանդում	$մ^2$	20.20000	0.31600	6.38320
9	P5-42	Փայտե շրիշակների քանդում	գմ	1108.24000	0.00700	7.75768
10	P5-42	Լամինատե շրիշակների քանդում	գմ	20.10000	0.00700	0.14070
11	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից	$մ^2$	2035.82000	0.16900	344.05358
12	P11-80	Սոսնձաներկի մաքրում պատերից /մասնակի/	$մ^2$	535.32000	0.16900	90.46908
13	P11-225	Գաջե սվաղի քանդում պատերից /մասնակի/	$մ^2$	952.49000	0.47000	447.67030
14	P11-229	Գաջե սվաղի քանդում առաստաղներից, սոսնձաներկի հետ միասին	$մ^2$	2057.30000	0.61500	1265.23950
15	P9-26 կիր.	Մետաղական բազրիքների ապամոնտաժում	գմ	50.60000	0.28300	14.31980
16	E20-409 կիր.	Օդափոխության մետաղական ցանցերի ապամոնտաժում	հատ	24.00000	0.75800	18.19200

17	P17-140	Ալյումինե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	181.00000	0.58400	105.70400
18	E18-111	Ջեռուցման մարտկոցների վերատեղադրում	հատ	181.00000	0.57500	104.07500
19	19-1 16-38	Պոլիպրոպիլենային խողովակների ապամոնտաժում և մոնտաժում	գմ	575.00000	0.47400	272.55000
20	շուկա	Խողովակների ամրացման ամրակներ /ֆիտինգներ/	հատ	48.00000	0.07000	3.36000
21	E16-220 22	Ջեռուցման ցանցի փորձարկում	գմ	575.00000	0.04900	28.17500
22	շուկա	Առկա գույքի ժամանակավոր տեղափոխման աշխատանքներ	մ^2	35.00000	1.90800	66.78000
23	C310-13 տ.մ.կ. 29	Շին աղբի և ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում մինչև 13կմ հեռավորության վրա	տ	96.70000	1.97100	190.59570
		Կառուցողական աշխատանքներ				
1	E8-140	Միջնորմների իրականացում թեթեւաբետոնե բլոկերից 40սմ հաստությամբ	մ^3	7.00000	12.05200	84.36400
2	E6-106 K=0.5	Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով	մ^3	1.10000	25.90100	28.49110
3	շուկա	Ամրան ∅10A500C	տ	0.10000	226.59500	22.65950
4	շուկա	Ամրան Φ6AcI	տ	0.04000	228.06000	9.12240
5	շուկա	Անկյունակ L50x5	տ	0.01400	224.18800	3.13863
		Բազվածքներ				
1	շուկա	Մետաղապլաստե սպիտակ դռների տեղադրում /հայկական, ներառյալ սարքերը, կողպեքները/	մ^2	1.84500	19.66400	36.28008
2	շուկա	ՄԴՖ լամինացված պահարանի դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/	մ^2	1.57500	16.14500	25.42838
3	E15-614	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում	մ^2	4.40000	0.67200	2.95680
		Հատակներ				
1	P5-85 P5-86	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ^2	11.90000	0.74500	8.86550
2	P5-40	Մանրահատակի հղկում	մ^2	903.70000	0.32700	295.50990
3	P14-385	Մանրահատակի լաքապատում 2 շերտ	մ^2	903.70000	0.25000	225.92500
4	P5-122	Լամինատե հատակի պատրաստում 12մմ /ներառյալ սպունգը, շրիշակները/	մ^2	903.70000	3.90300	3527.14110
5	P11-14	Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամով	մ^2	42.00000	1.45400	61.06800
6	P5-115	Խեցեսալե հատակի իրականացում	մ^2	4.80000	3.85500	18.50400
7	E11-252	Խեցեսալե շրիշակների իրականացում, h=10սմ	գմ	8.90000	3.26300	29.04070
8	P5-115	Պրեսգրանիտե հատակների պատրաստում /ոչ պակաս, քան 9մմ հաստությամբ/	մ^2	606.90000	6.10600	3705.73140
9	E11-252	Պրեսգրանիտե շրիշակների պատրաստում, h=10սմ	գմ	707.29000	1.07900	763.16591
10	E15-77	Աստիճանների երեսապատում չսահող պրեսգրանիտե սալերով	մ^2	46.80000	9.78600	457.98480
11	շուկա	Հատակների բաժանիչների տեղադրում	գմ	9.00000	1.04100	9.36900
		Բեմ				
1	E10-310	Բեմի փայտե հիմնակմախքի պատրաստում չորսուներից	մ^3	0.36400	145.97600	53.13526
2	E5-118	Բեմի նախահատակ նրբատախտակով, δ=10մմ	մ^2	19.00000	2.50100	47.51900

3	E10-34 կիր.	Բեմի առաջնամասի իրականացում լամինացված ՄԴՖ-ից /բարձրորակ/	մ^2	4.70000	2.42900	11.41630
		Յարդարման աշխատանքներ				
1	P11-57	Պատերի գաջե սվաղի վերանորոգում մասնակի	մ^2	952.49000	1.35400	1289.67146
2	P14-422	Պատերի ներկում լատեքսային ներկով բարձրորակ	մ^2	2052.92000	1.07700	2210.99484
3	P14-422	Պատերի ներկում լատեքսային ներկով /մասնակի/ բարձրորակ	մ^2	545.32000	1.07700	587.30964
4	P11-182	Առաստաղի գաջե սվաղում բարձրորակ	մ^2	2052.50000	1.35700	2785.24250
5	P14-423	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, մածկապատմամբ, բարձրորակ	մ^2	2052.50000	1.23700	2538.94250
6	E34-389 K=0.5	Կախովի «Արմստրոնգ» առաստաղների իրականացում	մ^2	133.80000	4.27000	571.32600
7	շուկա	Պատշգամբների ալյումինե բազրիքների իրականացում, բարձրորակ	գմ	11.60000	10.54600	122.33360
8	շուկա	Աստիճանների ալյումինե բազրիքների տեղադրում 0.9մ բարձրությամբ, բարձրորակ	գմ	43.00000	11.95200	513.93600
9	շուկա	Աստիճանավանդակում պատին ամրացվող մեկ ձողով ալյումինե բազրիքների իրակնացում	գմ	26.00000	1.82800	47.52800
10	E20-408	Օդափոխության ցանցերի տեղադրում	հատ	24.00000	1.79800	43.15200
11	շուկա	Առկա մետաղապլաստե դռների ուղղման աշխատանքներ /նոր հատակների իրականացման պատճառով/	հատ	50.00000	1.22300	61.15000
12	P13-33	Շենքի արտաքին պատերի, լվացում ջրի շիթով, հատուկ լուծույթների օգտագործմամբ	մ^2	87.00000	0.44200	38.45400
13	E8-191	Պողպատե խողովակներից արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	մ^2 հորիզ. պրոյ.	32.00000	0.67600	21.63200
		Շվաքարանի կառուցում				
1	E46-96	Մետաղական ծածկույթի ապամոնտաժում	մ^2	7.60000	0.05900	0.44840
2	C310-13տ.մ.կ. 29	Շին աղբի բարձում և տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	0.03400	1.97100	0.06701
3	E10-310	Փայտե հիմնակմախքի պատրաստում չորսուներից	մ^3	0.22100	145.97600	32.26070
4	E12-267	Ծածկույթի պատրաստում 0.55մմ հաստությամբ հարթ ցինկապատ թիթեղից	մ^2	11.00000	2.52400	27.76400
5	P8-191	Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից Φ100մմ, L=3գմ, ներառյալ ջրհոս ծագարները	կ-տ	2.00000	11.75800	23.51600
6	E34-389 K=0.5 կիր.	Կախովի առաստաղի իրականացում պլաստմասսե վահանակներից	մ^2	9.00000	2.54100	22.86900
		Տաք ջրամատակարարում				
1	16-262	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում PN 20 Φ20x4,2մմ	գմ	24.00000	1.23900	29.73600
2	16-261	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում PN 15 Φ20x4,2մմ	գմ	75.00000	1.11900	83.92500
3	16-134	Փական Φ20	հատ	12.00000	2.79000	33.48000
4	16-134	Փական Φ15	հատ	12.00000	2.67100	32.05200
5	շուկա	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր՝	հատ	60.00000	0.52700	31.62000
6	E18-230	Կուտակային ջրատաքացուցիչ Ariston 60լ	հատ	1.00000	34.35600	34.35600
7	E18-230	Կուտակային ջրատաքացուցիչ Ariston 50լ	հատ	11.00000	30.98700	340.85700
8	Ц-8-408-5	Ճկախողովակների տեղադրում	հատ	24.00000	1.06900	25.65600
9	E26-164-3	Խողովակների մեկուսացում հանքային բամբակով և ալյումինե թերթով	մ^3	0.50000	21.55700	10.77850

10	շուկա	Խողովակների ամրացման ամրակներ	հատ	60.00000	0.04900	2.94000
11	E16-220 22	Ցանցի փորձարկում	գմ	99.00000	0.04900	4.85100
		Այլ աշխատանքներ				
1	E20-729	Կանալային օդամուղի տեղադրում L=2000մ³/ժ, P=300Պա, N=740վտ /խոհանոցում/	կ-տ	1.00000	86.08400	86.08400
2	E20-110	Օդատարի անցկացում ցինկապատ պողպատից d=0.6մմ	մ²	52.00000	3.53700	183.92400
3	E17-61	Զուգարանակոնքերի տեղադրում թեք թողարկով, լվացման բաքով /մանկական/	կ-տ	1.00000	15.83900	15.83900
4	E22-365	Զուգարանակոնքի թողարկի կցորդիչ	հատ	1.00000	0.68100	0.68100
5	E17-61	Մանկական լվացարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը	կ-տ	2.00000	11.58600	23.17200
6	8-417-5	Ճկափող Φ15մմ, L=700մմ	հատ	5.00000	0.15700	0.78500
		Էլեկտրատեխնիկական մաս				
		Քանդման աշխատանքներ				
1	8-591-11 K=0.4	Ապամոնտաժվող վարդակ	հատ	75.00000	0.07600	5.70000
2	8-591-11 K=0.4	Ապամոնտաժվող անջատիչ	հատ	65.00000	0.07600	4.94000
3	P11-2կիր.	Ապամոնտաժվող բաժանման տուփ	հատ	70.00000	0.05000	3.50000
4	8-402-2 K=0.4	Հոսանքի հաղորդալարի ապամոնտաժում	գմ	424.00000	0.06100	25.86400
5	8-603-1 K=0.4	Լուսատուների ապամոնտաժում	հատ	220.00000	0.17500	38.50000
6	C310-13 տ.մ.կ. 29	Շին աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ	տ	1.60000	1.30900	2.09440
		Կառուցողական աշխատանքներ				
1	8-601-2	Լուսատու LED լամպով 36վտ, IP 20/40, 4000K	հատ	206.00000	6.75400	1391.32400
2	8-601-2	Լուսատու LED լամպով 18վտ, IP 20/40, 4000K	հատ	14.00000	4.85600	67.98400
3	8-591-7	Վարդակների տեղադրում 6Ա հողանցիչով	հատ	88.00000	0.67800	59.66400
4	8-591-2	Մեկստեղանի անջատիչների տեղադրում 6Ա	հատ	76.00000	0.80100	60.87600
5	շուկա	Տուփեր անջատիչների եւ վարդակների տեղադրման համար պլաստմասե	հատ	164.00000	0.09100	14.92400
6	շուկա	Տուփեր ճյուղավորման	հատ	82.00000	0.05600	4.59200
7	E46-43	Բնիկների պատրաստում (100x100x80մմ)	հատ	164.00000	0.48300	79.21200
8	8-525-1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	8.00000	1.90000	15.20000
9	E46-57	Ակոսների պատրաստում	գմ	300.00000	0.19000	57.00000
10	8-402-2	ՊՊՎԳ 3x2.5մմ² հատվածքով, բազմաջիղ պղնձե լարերով հաղորդալարի անցկացում	գմ	424.00000	0.37900	160.69600
11	8-402-2	ՊՊՎԳ 3x4մմ² հատվածքով, բազմաջիղ պղնձե լարերով հաղորդալարի անցկացում	գմ	28.00000	0.50000	14.00000
12	8-402-2	ՊՊՎԳ 3x6մմ² հատվածքով, բազմաջիղ պղնձե լարերով հաղորդալարի անցկացում	գմ	57.00000	0.56800	32.37600
13	11-840-6	Սակառ	գմ	124.00000	0.50100	62.12400
		Հարթ տանիք				

		Քանդման աշխատանքներ				
1	E46-96	Պարապետի վրայից մետաղական թիթեղի ապամոնտաժում	մ^2	29.50000	0.05900	1.74050
2	E46-119 E46-120	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=30մմ /մասնակի/	մ^2	87.00000	0.25200	21.92400
3	P11-225	Ց/ավազային սվաղի քանդում պարապետից	մ^2	26.00000	0.47000	12.22000
4	E46-95	Տանիքի վրայից իզոգամով ծածկույթի հեռացում	մ^2	98.00000	0.10700	10.48600
5	C310-13 տ.մ.կ 29	Առաջացած շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	2.67000	1.97100	5.26257
		Կառուցողական աշխատանքներ				
1	E12-299 E12-300	Ցեմենտ-ավազային հարթեցնող շերտի իրականացում 20÷60մմ հաստությամբ	մ^2	87.00000	1.31000	113.97000
2	E15-260	Պարապետի սվաղում ց/ավազային շաղախով	մ^2	26.00000	0.84100	21.86600
3	E10-70	Փայտե չորսվակների տեղադրում թիթեղի տակ	մ^3	0.14000	126.43100	17.70034
4	E12-280	Պարապետի ծածկում նոր ցինկապատ հարթ թիթեղով δ=0.55մմ	մ^2	30.00000	2.39700	71.91000
5	E12-109 կիր.	Ծածկույթի իրականացում երկշերտ իզոգամից /երկրորդ շերտը փայլաթիթեղով/	մ^2	98.00000	2.60500	255.29000
		Բարեկարգման աշխատանքներ				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ^3	0.21000	4.94100	1.03761
2	E6-22	Բետոնե հարթակի և թեքահարթակի կառուցում B15 դասի բետոնից	մ^3	0.30000	28.16400	8.44920
3	E15-77	Հարթակների երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ.	մ^2	3.00000	9.64300	28.92900
4	E27-83	Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	7.00000	3.28800	23.01600
5	E12-280	Արտաքին պատուհանագոգերի իրականացում ցինկապատ թիթեղից δ=0.55մմ, 20սմ լայնությամբ	մ^2	98.20000	2.16700	212.79940
6	E46-131	Բազալտե աստիճանների ապամոնտաժում, հետագա վերատեղադրմամբ	գմ	16.00000	0.75900	12.14400
7	E8-11	Տոփանած գրունտի բազալտե խճի խարնուրդով շերտ (50%/50%)	մ^3	0.35000	3.25700	1.13995
8	E7-734	Բազալտե աստիճանների վերատեղադրում	գմ	14.00000	1.10900	15.52600
9	E7-734	Նոր բազալտե աստիճանների տեղադրում /ապամոնտաժվածի լրացում/	գմ	2.00000	5.91800	11.83600
10	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ^3	1.00000	4.93300	4.93300
11	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով	մ^3	0.80000	9.58100	7.66480
12	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	մ^2	20.00000	3.04800	60.96000
13	E33-82	Առկա ճաղաշարերի երկտակ յուղաներկում	տ	4.20000	7.96600	33.45720
14	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ^2	287.00000	0.48100	138.04700
15	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	մ^2	287.00000	2.39200	686.50400
16	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ էկոնոմ լամպով 85վտ. կամ համարժեք	հատ	6.00000	8.18600	49.11600
		Ընդամենը				28330.0000
		Սարքավորումներ				618.7000

		Ընդամենը /առանց սարքավորումների/		27711.3000
		ԱԱՀ, 20%		5666.0000
		Ընդամենը		33996.0000

Տեխնիկական առաջադրանք

1.Իրականացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ըստ շինարարական նորմերի և կանոնների:

2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

3. Սահմանված կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ կատարել բոլոր անհրաժեշտ փորձարկումները՝ կազմելով դրանց ակտերը:

4. Կապալառուն պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում նախագծային կազմակերպության կողմից կազմված նախահաշվում ներառված գնի սահմաններում Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել օբյեկտում օգտագործվելիք հարդարման և երեսպատման նյութերի (մետլախ, կաֆել, պրեսգրանիտ, կերամոգրանիտ, մամլոգրանիտ, լամինատ, կերամիկական սարքավորումներ, ծորակներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, ալյումինե բազրիքներ և այլն) նմուշները, ներկայացնելով նաև դրանց գինը հիմնավորող փաստաթղթերը և սերտիֆիկատները:

Վերոգրյալ ժամկետի կամ պայմանի խախտման դեպքում նույն նախահաշվային գնի սահմաններում Կապալառուն պարտավոր է ձեռք բերել վերոգրյալ նյութերը Պատվիրատուի ընտրությամբ:

5. Կապալառուն պարտավոր է շինարարական աշխատանքների ընթացքում օբյեկտում մշտապես ապահովել մրցույթի փաստաթղթերով ներկայացված աշխղեկի և կոմունիկացիոն համակարգերի ինժեների ներկայությունը: Կապալառուն վերոգրյալ աշխղեկին՝ Սարգիս Հարությունյանի և կոմունիկացիոն համակարգերի ինժեներին կարող է փոխարինել մրցույթի պայմաններին բավարարող այլ անձով, նախապես այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին, ներկայացնելով նոր ինժեների որակավորումը հավաստող փաստաթղթերը:

6. Կապալառուն պարտավոր է մեկամսյա ժամկետում ուսումնասիրել նախագծային փաստաթղթերը և թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին գրավոր հայտնել Պատվիրատուին:

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն

Կ.Տ

Կապալառու
«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ
Ք. Երևան, Կարապետյան 9
«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 22307010236
ՀՎՀՀ 01201774

Ա. Զաքարյան ----------

Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 29>> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.96 մանկապարտեզի վերանորոգման վերանորոգման » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.96 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 15.08.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Զթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ
Ք. Երևան, Կարապետյան 9
«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 223070102361
ՀՎՀՀ 01201774

Ա. Զաքարյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 29>> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45611100	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.96 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ	--	---	10 575 000	28 200 000	28 200 000	28 200 000	33 996 000	33 996 000	33 996 000	33 996 000	33 996 000	33 996 000	33 996 000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն*
Կ.Տ

Կապալառու
«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ
Ք. Երևան, Կարապետյան 9
«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 223070102361
ՀՎՀՀ 01201774

Ա. Զաքարյան ----------
Ստորագրություն*
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 29>> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /եթե վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 29>> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56>>** *գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56*
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«29» մարտի 2018 թ

«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ն , ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Զաքարյանի անձնագիր. AM 0220036 տրված 25.02.2011թ 012-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _*ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն <<կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու
«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ
Ք. Երևան, Կարապետյան 9
«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 223070102361
ՀՎՀՀ 01201774

Ա. Զաքարյան ----------
(ստորագրություն)

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ

4. Վճարողի բանկը՝ «Արցախբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 223070102361

6. Վճարողի ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ 01201774

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12. Գումարը թվերով և բառերով՝ 3399600 /երեք միլիոն երեք հարյուր իննսունինը հազար վեց հարյուր/

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ *ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56*

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝ — էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ա. Հարությունյան /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*